ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒԻՐԵՐ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՒԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի տոնին, օրհնությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հընթացս Ս. Պատարագի Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում տեղի ունեցավ 40 սարկավագների ձեռնադրություն:

Նախորդ օրը՝ Երեկոյան ժամերգության ընթացքում, Մայր Տաճարում տեղի էր ունեցել կիսասարկավագության, ուրարակրության եւ դպրության տվչության հանդիսավոր արարողությունը:

Ս.Պատարագի ընթացքում, ձեռամբ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ե. լսարանի 22 սաներ, Քահանայից պատրաստման լսարանի 17 ուսանողներ եւ Սյունյաց թեմից մեկ սպասավոր արժանացան սարկավագության աստիճանի:

Ձեռնադրության հանդիսավոր արարողության ավարտին Սրբազան Հայրը տոնի առթիվ շնորհավորեց նորընծաներին եւ Մայր Աթոռի ողջ սարկավագաց դասին: Անդրադառնալով սարկավագական կոչմանն ու ծառայությանը՝ Հովակիմ Սրբազանը մասնավոր կերպով ընդգծեց, որ Ս. Ստեփանոսի տոնն իր հստակ ու խորը պատգամն ունի՝ ուղղված բոլոր սարկավագներին՝ անձնազոհաբար ծառայելու մեր Մայր Եկեղեցուն եւ հայ ժողովրդին: Այնուհետեւ Սրբազան հայրը հորդորեց նորընծաներին հանձնառություն ունենալ կենդանի հավատքի նահատակության:

Ս. Պատարագից հետո Մայր Աթոռի բոլոր սարկավագներին եւ նորընծաներին իր հայրապետական օրհնությունը բաշխեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Տոնի առիթով շնորհավորելով սարկավագներին՝ Վեհափառ Հայրապետը հորդորեց նրանց կյանքի դժվարությունների առջեւ չերկնչել, ամուր մնալ հավատքի մեջ, կյանքն ապրել նվիրումով ու հանձնառությամբ, իբրեւ հոգեւոր սպասավորներ ունենալ նաեւ նահատակության բարձր գիտակցություն:

Նորին Սրբությունը հայրապետական իր սերն ու գնահատանքը բերեց սարկավագներին՝ մաղթելով հաջողություններ իրենց եկեղեցական սպասավորության մեջ: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ սարկավագները հույս եւ լավատեսություն են ներշնչում Եկեղեցու վաղվա օրվա համար:

Սարկավագական ձեռնադրություն Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում

Սարգսյանների ընտանիքը Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու դիմաց

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ Սիրիայում տիրող իրավիճակը եւ սիրիահայության ծանր կացությունը: Հայ Առաքելական Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերը Մայր Աթոռի միջոցով պարբերաբար աջակցություն են ցուցաբերում սիրիահայությանը՝ հաղթահարելու դժվարին պայմանները:

Սուրբ Ծննդյան տոների առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը 100.000 ԱՄՆ դոլար գումար է փոխանցել Դամասկոսի հայոց թեմին՝ Սիրիայի հայկական դպրոցների կարիքների համար:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ «ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը «Ս. Էջմիածնի գիտական ժառանգությունը» շարքով լույս է ընծայել Հոգեշնորհ Տ. Զաքարիա վարդապետ Բաղումյանի «Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում» աշխատությունը, որն առաջին անգամ համակողմանիորեն անդրադառնում է ծիսասպվածաբանական մեկ խնդրի, թե ինչո՞ւ Հայոց Եկեղեցին, ի տարբերություն քրիստոնեական մյուս եկեղեցիների, Ս. Պատարագի ժամանակ ջուր չի խառնում հաղորդության բաժակի մեջ:

Ուսումնասիրության նպատակն է Հայոց Եկեղեցու հայրերի, վարդապետների եւ Սրբազան Ավանդության միջոցով տեսնել եւ ցույց տալ, թե ինչպե՞ս է մեր Եկեղեցին մեկնաբանել այս կամ այն սուրբգրային տեղին, հարկ եղած դեպքում ինչ փաստեր եւ հակափաստարկներ է բերել՝ ապացուցելու համար անապակ գինով պատարագելու իր Ավանդությունը:

Աշխատությունը նախատեսված է աստվածաբանների, հայագետների եւ ընթերցողների լայն շրջանակի համար: Գիրքը տպագրվել է Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արեւմտյան թեմի մեկենասությամբ:

Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Յունուարի 6-ին՝ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին, Միածնաէջ Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Պատարագի սկզբում հայրապետական խաչվառազարդ թափօրը Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեա-

նին ամպհովանիով առաջնորդեց Մայր Տաճար: Ամպհովանակիրներն էին՝ սուդանահայ բարերար Հրաչ Մարտիկեանը, ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ Արմէն Էլբակեանը, արուեստաբան Հրավարդ Յակոբեանը եւ ՀՀ վաստակաւոր արտիստ Տիգրան Ներսիսեանը: Նորին Սրբութեանը որպէս առընթերականեր սպասաւորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան եպիսկոպոս Յակոբեանը եւ Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրէն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանը:

Ս. Ծննդեան Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն աւետեց Տիրոջ ծննդեան բարի լուրը եւ այդ առիթով հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայութեանը:

Ս. Պատարագից յետոյ Վեհափառ Հայրապետի հանդիսապետութեամբ կատարուեց Ջրօրհնէքի արարողութիւն: Մայր Տաճարում ջրօրհնէքի Խաչի կնքահայրն էր Հայ Եկեղեցու մոսկուաբնակ բարերար Հայկ Մաղաքէլեանը:

Ս. Պատարագի արարողութեանը ներկայ էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը եւ կառավարութեան անդամներ, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամներ, պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, Հայաստանում հաւատարմագրուած օտարերկրեայ դիւանագէտներ, կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի ներկայացուցիչներ:

Ս. Պատարագից յետոյ Ալէք եւ Մարի Մանուկեան Գանձատան սրահում տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, որի ընթացքում Նորին Սրբութիւնը վերստին իր օրհնութիւնն ու բարեմաղթանքները փոխանցեց ներկաներին Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԵՈՒԹՅԱՆԸ

Հունվարի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռում գտնվող բաժինների պաշտոնեությանը:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորեց ներկաներին Ամանորի եւ Ս. Ծննդյան բերկրաշատ տոների առիթով եւ իր Հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց նրանց:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Մայր Աթոռի աշխատակիցներին նվիրյալ աշխատանքի համար՝ կարեւորելով յուրաքանչյուրի ծառայությունը Եկեղեցու առաքելության բարեհաջող իրականացման գործում: Ապա Վեհափառ Հայրապետը հորդորեց նույն ոգով եւ նախանձախնդրությամբ շարունակել ջանադիր ծառայությունը՝ ի պայծառություն Հայ Առաքելական Ս. Եկեղեցու եւ ի բարօրություն հայ ժողովրդի:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ նոր տարվա անելիքներին ու ծրագրերին:

Վեհափառ Տայրապետը Ս.Սարգիս մատուռի դիմաց՝ պատկերազարդման նախ

Երիտասարդաց միության անդամները Մայր Աթոռում

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան Հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմական երիտասարդական միությունների, հասարակական կազմակերպությունների, բուհական ուսանողական խորհուրդների անդամներին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանի առաջնորդությամբ երիտասարդներն այցելել էին Մայր Աթոռ՝ շնորհավորելու Նորին Սրբությանը Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով եւ ստանալու հայրապետական օրհնությունն ու պատգամը:

Հանդիպման սկզբում բացման խոսքով հանդես եկավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու երիտասարդաց միության կենտրոնական գրասենյակի տնօրեն Գեորգ Մկրտչյանը, որ ներկա երիտասարդության անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետին Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով: Այնուհետեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը խոսքով դիմեց երիտասարդներին՝ նշելով, որ նրանց բազմաքանակ ներկայությունը Մայր Աթոռում նոր լիցք ու զգացումներ է հաղորդում բոլորին՝ շարունակելու իրենց ստվածահաճո կյանքը եւ կերտելու հայ ժողովրդի լուսավոր ու պայծառ ապագան:

Միջոցառումը հոգեւոր ու ազգային երգերի գեղեցիկ կատարումներով զարդարեց Գեորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը:

Ապա երիտասարդներին իր հայրապետական օրհնությունն ու գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը մաղթեց, որ 2014-ը երիտասարդների համար լինի ուրախության, բերկրանքի ու հաջողությունների տարի: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Աստծո օրհնությունն ունենալով՝ երիտասարդները պետք է ջանքեր գործադրեն, որպեսզի նոր տարին լինի օրհնության տարի ինչպես յուրաքանչյուր հայ անհատի, այպես էլ ամբողջ հայ ազգի ու մարդկության համար: Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց երիտասարդներին օգտագործելու համայն հայության հոգեւոր կենտրոն այցելության այս առիթը՝ աղոթք բարձրացնելու Մայր Տաճարում եւ վերանորոգելու իրենց ուիտն Աստծո հետ, քայլելու Տիրոջ պատվիրանների համաձայն եւ իրենց եկեղեցասեր ու ազգանվեր կյանքով նպաստելու երկրի առաջընթացին ու ժողովրդի բարօր ապագայի կառուցմանը:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաեւ երիտասարդների հարցերին, որոնք վերաբերում էին 2015 թվականին Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ եկեղեցու կողմից կազմակերպվող աշխատանքներին, Ցեղասպանության զոհերի սրբադասմանը, Մայր Աթոռ Ս.

Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համագործակցությանը, Եկեղեցու քարոզչական գործունեությանը, սիրիահայության կյանքին, բանակում իրականացվող հոգեւոր սպասավորությանը եւ եկեղեցի-պետություն հարաբերություններին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԱԽԱԳԱՀԵՑ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՋԻՄ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 8-ին Երեւանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահեց անվանի ճարտարապետ Ջիմ Թորոսյանի հոգեհանգստյան արարողությունը:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետն իր խոսքն ուղղեց սգակիր ընտանիքին եւ ներկաներին:

«Խորը ցավով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նվիրյալ եւ արժանավոր զավակ, վաստակաշատ ճարտարապետ, ակադեմիկոս տիար Ջիմ Թորոսյանի մահվան մասին:

...Լուսահոգի Ջիմ Թորոսյանը ճանաչված է Հայաստանում եւ Հայաստանից դուրս որպես ճշմարիտ մտավորական, տաղանդաշատ եւ երախտավոր ճարտարապետ: Նրա նախագծած շենքերը, համալիր կառույցներն ու կոթողները զարդարում են քաղաքամայր Երեւանը, հայրենի մեր երկրի տարբեր քաղաքներ եւ կրում են մեծ ճարտարապետի հայրենանվեր ու ազգասեր ոգու վառ կնիքը:

Մենք մասնագետ չենք ճարտարապետության բնագավառի, եւ Մենք չէ, որ պիտի գնահատական տանք շնորհալի ճարտարապետի արվեստին, սակայն այսօր, երբ վերջին հանգրվան ենք ուղեկցում նրան, ցանկանում ենք փոխանցել Մեր տպավորությունները եւ զգացումները, որ ունեցել ենք հոգելույս Ջիմ Թորոսյանի հետ Մեր շփումների եւ հարաբերությունների ընթացքին: Մեր հանդիպումներում մշտապես զգացել ենք խոհեմազարդ մտավորականի վեհանձնությունը, օրինակելի բարեկրթությունը, ազնվությունն ու պարկեշտությունը, ում հետ մտերմությունը ուրախություն էր պատճառում եւ խորին հարգանք ու բարեկամական բարի զգացումներ ներշնչում: Նա կենսուրախ էր ու լավատես եւ միշտ լեցուն նոր մտահղացումներով: Բարեհիշատակ Ջիմ Թորոսյանն ապրում էր ստեղծագործական մշտական երկունքի մեջ եւ իր նախագծերը ստեղծում էր ազգային արժեքների խորը ընկալումով: Արդիականի եւ ազգայինի բարձրաճաշակ համադրությամբ ու բարձր վարպետությամբ նա ձգտում էր միշտ կատարելության հասցնել իր աշխատանքները՝ կերտելով նոր ժամանակների հայ ճարտարապետության հիանալի կոթողներ: Առանձնահատուկ գրավչություն ունեն նրա բացառիկ տաղանդով ստեղծված, ոգի, ներշնչանք ու քաջալերություն հաղորդող նրբաճաշակ զարդաքանդակները: Ջիմ Թորոսյանի շնորհաց դրոշմն են կրում նաեւ նրա նախագծած եկեղեցական կառույցները՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մուտքը եւ բացօթյա խորանը, Սուրբ Վարդան-Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանը, Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի նոր

մասնաշենքը, Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին, ստալինյան բռնապիրության տարիներին նահատակյալ հոգեւորականաց հուշապատը: Գովարժան է մեծանուն հայորդու տասնամյակների մանկավարժական բեղուն գործունեությունը: Նրա ոգու եւ շնչի ներքո ճարտարապետների նոր սերունդներ են կրթվել, ովքեր շարունակելու են լուսահոգի Ջիմ Թորոսյանի ավանդներով ստեղծագործել ու արարել՝ ի շինություն մեր հայրենի երկրի:

Ջիմ Թորոսյանը ճարտարապետական իր մեծ ավանդի ու վաստակի համար արդարորեն արժանացել է բազմաթիվ պարգեւների: Անվանի ճարտարապետի կուրծքը զարդարել ենք նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանով՝ ի գնահատություն նրա գովարժան ներդրումի՝ որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական խորհրդի ատենապետ, եւ հայ մշակույթին ու ճարտարապետությանը մատուցած երախտարժան ծառայությունների համար:

Ցավալի կորստի այս պահին ի խորոց սրտի Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Ողորմածն Աստված մեր ժողովրդի վաստակաշատ զավակի հոգու հանգստության եւ խաղաղության համար եւ հայցում, որ Բարեգութ Տերը երկնից լուսեղեն խորաններում ընդունի անմահ հոգին նորոգ հանգուցյալ սիրելի Ջիմ Թորոսյանի: Եւ թող միսիթարիչ Սուրբ Հոգին սփոփի վշտացյալ սրտերը սգակիր Թորոսյան ընտանիքի անդամների, հարազատների եւ մտերիմների:

Խունկ, աղոթք եւ օրհնություն լուսահոգի Ջիմ Թորոսյանի պայծառ հիշատակին», - ասաց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ԱՅՑԵՐ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ՎԱՅՐԵՐ

Մեր Տիրոջ եւ Փրկչի Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրեակատարողական հիմնարկների հոգեւոր ծառայությունը՝ գլխավորությամբ ծառայության պատասխանատու Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանի, կազմակերպել էր հոգեւորականների այցելություններ ՀՀ քրեակատարողական հիմնարկներ: Այցերի ընթացքում ազատազրկման վայրերում բանտային կառույցի եկեղեցականները մատուցեցին Սուրբ Պատարագ, կատարեցին ջրօրհնեքի եւ հոգեհանգստի արարողություններ՝ դատապարտյալներին ու աշխատակիցներին փոխանցելով Սուրբ Ծննդյան ավետիսը: Տեղի ունեցավ նաեւ մի քանի դատապարտյալների մկրտություն:

Ծառայության հոգեւոր սպասավորները, շարունակելով «Աջակցություն դատապարտյալների ընտանիքներին» ծրագիրը, Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով այցելեցին նաեւ ազատազրկվածների 20 ընտանիքներ, որոնք ապրում են ծանր ընկերային պայմաններում եւ ունեն անչափահաս երեխաներ: Այցի ընթացքում կատարվեցին տնօրհնեքի արարողություններ, տեղի ունեցան հոգեխնամ զրույցներ ընտանիքների անդամների հետ, ինչպես նաեւ ընտանիքներին հանձնվեցին տոնական նվերներ, ցուցաբերվեց դրամական օգնություն:

ՀՐԱՏԱՊ ԿՈՉ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԱՐԴԱՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Հունվարի 15-17-ը Ժնեւի Էկումենիկ կենտրոնում, տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի էկումենիկ խորհրդակցություն Սիրիայի վերաբերյալ, որին մասնակցեցին տարբեր Եկեղեցիների հոգեւոր առաջնորդներ եւ ներկայացուցիչներ Սիրիայից, Միջին Արեւելքի Եկեղեցիների խորհրդից, Վատիկանից եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից: Խորհրդակցությանն Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ներկայացնում էր ԵՀԽ Կենտրոնական կոմիտեի անդամ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը (Հայ Եկեղեցու Ամերիկայի Հայոց Արեւելյան թեմ):

Խորհրդակցության վերջում մասնակիցները հանդես եկան հայտարարությամբ՝ ուղղված առաջիկայում Սիրիայի վերաբերյալ կայանալիք «Ժնեւ 2» համագումարին, որում մասնավորապես ասված է.

«Քրիստոնյաները Քրիստոնության տարածումից ի վեր շարունակ ներկայություն են պահպանել Սիրիայի երկրում: Այսօր, որպես Եկեղեցիներ եւ Եկեղեցուն առնչվող մարդասիրական կառույցներ, մենք ամեն օր Սիրիայի ժողովրդի հետ ենք եւ՛ երկրի ներսում, եւ՛ փախստականների հետ: Այստեղ մենք ուղիներ ենք փնտրում բարձրացնելու նրանց ձայնը:

Մենք անհանգստանում ենք բոլոր այն մարդկանց համար, ովքեր տուժել են Սիրիայում անխնա բռնության եւ մարդկային աղետի պատճառով: Անհամար թվով անմեղ երեխաներ, կանայք եւ տղամարդիկ են սպանվում, վիրավորվում եւ հեռացվում իրենց տներից: Մենք լսում ենք նրանց լացի ձայնը՝ գիտենալով, որ երբ «մեկը տառապում է, մենք էլ ենք տառապում իր հետ» (Ա. Կորնթ. ԺԲ. 26):

Երկրում տիրող ճգնաժամին ոչ մի ռազմական լուծում չի լինի: Ջանալով հավատարիմ լինել բոլոր մարդ արարածների հանդեպ Աստծո սիրուն եւ նաեւ միջազգային հումանիտար իրավունքի համապատասխան՝ մենք ներկայացնում ենք խաղաղության հաստատմանն ուղղված գործողությունների եւ ուղենիշերի այս պահանջը:

Մենք կոչ ենք անում ձեզ, որպես «Ժնեւ Բ.» համագումարի մասնակիցների.

1. Դադարեցնել բոլոր զինված հակամարտությունների եւ թշնամության անմիջապես դադարեցումը Սիրիայում: Մենք կոչ ենք անում հակամարտության բոլոր կողմերին ազատ արձակել ձեռբակալված եւ առեւանգված անձանց: Հորդորում ենք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ միջոցներ ձեռք առնել վերջ տալու Սիրիա զենքի եւ օտարերկրյա զինվորների հոսքին:

2. Ապահովել, որ Սիրիայի բոլոր խոցելի համայնքները եւ հարեւան երկրներում ապաստան գտած փախստականները պատշաճ հումանիտար օգնություն ստանան: Այնտեղ, որտեղ այսպիսի մեծաքանակ բնակչությունը լուրջ վտանգի մեջ է, ամբողջական մարդասիրական մուտքը կարեւոր է՝ համաձայն միջազգային իրավունքի եւ Պաշտպանության պատասխանատվության:

3. Ջարգացնել բազմակողմանի եւ ընդգրկուն գործընթաց արդար խաղաղության հաստատման եւ Սիրիայի վերակառուցման համար: Հասարակության բոլոր հատված-

ները (այդ թվում՝ կառավարություն, ընդդիմություն եւ քաղաքացիական հասարակություն) պետք է ներառվեն սիրական խնդրի լուծման մեջ Սիրիայի ժողովրդի համար: Մենք գիտակցում ենք կանանց եւ երիտասարդներին այս գործընթացներում ներգրավելու անհրաժեշտությունը:

«Ժնեւ Բ.»-ը պետք է վերածվի խաղաղություն կառուցող գործընթացի՝ արձագանքելով Սիրիայի ողջ ժողովրդի օրինավոր սպասումներին: Մենք առաջարկում ենք հետեւյալ ուղենիշերը:

Խաղաղության հասպատմանն ուղղված որեւէ գործընթաց պետք է Սիրիայից առաջնորդվի: Այն պետք է լինի թափանցիկ եւ վստահելի, որպեսզի սիրիացիները կարողանան վճռել իրենց երկրի ճակատագիրը: Նման գործընթացը պահանջում է Արաբական Լիգայի, ՄԱԿ-ի եւ ներկա ճգնաժամում ներգրավված բոլոր կողմերի կառուցողական ներգրավվածություն,

• Բոլոր ջանքերը պետք է գործադրվեն՝ ապահովագրելու Սիրիայի խաղաղությունը, տարածքային ամբողջականությունը եւ անկախությունը.

• Սիրիայի հասարակության բազմաէթնիկ, բազմակրոն եւ բազմադավան բնույթը եւ ավանդույթը պետք է պահպանվի: Սիրիական հասարակության վառ խճանկարը պահանջում է հավասար իրավունքներ բոլոր քաղաքացիների համար: Մարդու իրավունքները, արժանապատվությունը եւ կրոնական ազատությունը ամենքի համար պետք է խթանվեն եւ պաշտպանվեն միջազգային նորմերին համապատասխան:

Որպես քրիստոնյաներ՝ մենք միաձայն ենք կոչ անելիս Սիրայում արդար խաղաղության հասպատման համար: Այս խաղաղությանը հասնելու նպատակով մենք պետք է միասին աշխատենք մեր մահմեդական քույրերի եւ եղբայրների հետ, որոնց հետ ունենք ընդհանուր պատմություն, ինչպես նաեւ հոգեւոր եւ ընկերային արժեքներ: Մենք վստահության կառուցման միջոցով ենք ջանում աշխատել հանուն ազգային հաշտության եւ ապաքինման: «Երանի խաղաղարարներին» (Մատթ. Ե. 9)»:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հունվարի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանին եւ տիկին Վերա Սեդրակյանին, ինչպես նաեւ ՀԲԸՄ փոխնախագահ Սինան Սինանյանին եւ տիկին Անժել Սինանյանին:

Հանդիպման ընթացքում տիար Սեդրակյանը Նորին Սրբությանը ներկայացրեց ՀԲԸՄ կողմից Հայաստանում եւ Արցախում իրականացվող ծրագրերը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ նախագահը նաեւ քննարկեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀԲԸՄ համատեղ եկեղեցաշինական, կրթական եւ ընկերային ծրագրերը, եկեղեցական կյանքին առնչվող զանազան խնդիրներ: Նորին Սրբությունն այս առիթով իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ՀԲԸՄ նախագահին եւ ՀԲԸՄ անդամներին՝ նրանց

եկեղեցանվեր ոգու եւ ՀԲԸՄ կողմից Հայ Եկեղեցուն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ցուցաբերվող մշտական զորակցության, ինչպես նաեւ ազգօգուտ եւ հայրենաշեն նվիրյալ գործունեության համար:

Մասնավոր անդրադարձ կատարվեց սիրիահայության վիճակին, ինչպես նաեւ Մայր Աթոռի եւ Հայ Եկեղեցու թեմերի կողմից Սիրիայի հայ համայնքին, Հայաստանում եւ այլ երկրներում ապաստան գտած սիրիահայ ընտանիքներին ցուցաբերվող օգնությանը: Վեհափառ Հայրապետը եւ ՀԲԸՄ նախագահը, իրենց մտահոգությունն արտահայտելով Սիրիայում տիրող ծանր կացության առնչությամբ, կարեւոր նկատեցին աշխարհասփյուռ հայության եւ ազգային հաստատությունների ջանքերի մեկտեղումը՝ ի նպաստ հակամարտության դժվարությունները կրող հայորդիների:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ ներկայացուցիչներն արծարծեցին նաեւ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին առնչվող հարցեր: Այս կապակցությամբ Նորին Սրբությունն ընդգծեց կարեւորությունը տարելիցին ընդառաջ իրականացվելիք միջոցառումների, որոնք պիտի նպաստեն հայ ժողովրդի նկատմամբ արդարության վերականգնմանը: Վեհափառ Հայրապետը մասնավորապես ներկայացրեց Հայոց Եղեռնի զոհերի սրբադասման ուղղությամբ Հայ Եկեղեցու Սրբադասման հանձնախմբի կողմից իրականացվող աշխատանքները:

Հանդիպման ավարտին ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը եւ ՀԲԸՄ փոխնախագահ Սինան Սինանյանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, վստահեցրին Ամենայն Հայոց Հայրապետին, որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, հավատարիմ իր առաքելությանը եւ եկեղեցասեր ոգուն, պիտի շարունակի ըստ ամենայնի իր աջակցությունը բերել Մայր Աթոռին եւ նրա ազգանվեր ծրագրերին:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 26-ին՝ Բանակի օրվա առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանը եւ ՀԲԸՄ անդամներ:

Ս. Պատարագի ընթացքում իր քարոզում Վրթանես Սրբազանը անդրադարձավ հայ ժողովրդի կյանքում հայոց բանակի ունեցած կարեւոր դերին ու նշանակությանը:

Ս. Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք՝ ի շինություն եւ ի պայծառություն Հայաստան աշխարհի ու Հայոց բանակի:

Հայոց բանակի հրամանատարները Մայր Աթոռում

Հանրապետական մաղթանքից հետո Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ներկաներին՝ մեկ անգամ եւս ամենքին շնորհավորելով Հայոց բանակի 22-րդ տարեդարձի առիթով: Իր խոսքում Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ Հայոց բանակն իր զինվորների ու զորականների անձնվեր ծառայության շնորհիվ այսօր ապահովում է երկրի խաղաղությունը՝ անվրդով կյանք ստեղծելով մեր ժողովրդի ու Հայրենիքի համար: Վեհափառ Հայրապետը ՀՀ Զինված ուժերի սպասավորներին մաղթեց Տիրոջ օրհնության ներքո երկար տարիների քաջառողջ կյանք, արդյունավոր ծառայություն եւ նորանոր ձեռքբերումներ ի սեր Մայր Հայրենիքի եւ ի փառս մեր ժողովրդի:

Այնուհետեւ տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն: Ի գնահատություն Հայրենիքին ու հավատավոր ժողովրդին մատուցած ծառայությունների՝ Վեհափառ Հայրապետը Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի միջնորդությամբ Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով պարգեւատրեց գեներալ-մայոր Սամվել Կարապետյանին, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանին, փոխ-գառնիկ Հայրապետյանին, գնդապետ Դանիել Բալայանին եւ գնդապետ Օնիկ Գասպարյանին:

ԿԱԹՈԼԻԿ ԵՒ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Հունվարի 28-ին Հնդկաստանի Կերալա քաղաքում իր աշխատանքն սկսեց Կաթոլիկ եւ Հին Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների միջեւ պաշտոնական աստվածաբանական երկխոսության միացյալ միջազգային համաժողովը: Համաժողովին Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում են Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Մայր Աթոռի Հրատարակչական եւ Պաշտոնական մամուլ բաժինների տնօրեն Տ. Շահե վարդապետ Անանյանը, իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից՝ Տ. Նարեկ արքեպիսկոպոս Ալամեզյանը:

Հունվարի 28-ին համաժողովի մասնակիցներն առանձին հանդիպումով քննարկեցին ընդհանուր խնդիրներ, որի ժամանակ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը ներկայացրեց Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Մայր Աթոռում կազմակերպվելիք միջոցառումները, ինչպես նաեւ անդրադարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դերակատարությանը՝ որպես Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի համանախագահի:

Պլենար նիստի ընթացքում, որը նախագահում էին Տ. Նարեկ արքեպիսկոպոս Ալեմեզյանը եւ Քրիստոնեության միասնության ջատագովման պապական խորհրդի նախագահ Կարդինալ Կուրդ Կոխը, Տ. Շահե վարդապետ Անանյանը ներկայացրեց

«Երուսաղեմը պատարագի եւ ուխտագնացության միջեւ. Հայկական ավանդության ուսումնասիրություն» աշխատանքը:

Ապա Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանն առանձնազրույց ունեցավ Կարդինալ Կուրդ Կոխի հետ:

Իսկ Հունվարի 29-ին մասնակիցներին պաշտոնական ընթրիքի ընդունեց Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Մար Թոմա Պաոլոս Բ.-ն:

ԾԻՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ

Յունուարի 29-30-ը՝ Անթիլիասում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի օրհնութեամբ տեղի ունեցաւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ծիսական յանձնախմբի հանդիպումը, որին մասնակցում էին Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Օհանեանը (համաատենապետ), Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը (համաատենապետ), Տ. Վարուժան արքեպիսկոպոս Հերկելեանը, Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսեանը, Տ. Գեղամ արքեպիսկոպոս Խաչերեանը, Տ. Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանը, Տ. Վահան եպիսկոպոս Յովհաննիսեանը եւ Տ. Զաքարիա վարդապետ Բաղումեանը:

Հանդիպման ընթացքում, յանձնախումբը հիմք ընդունելով 2013 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարուած Եպիսկոպոսաց ժողովի որոշումները, քննարկեց եւ վերջնական տեսքի բերեց Ս. Մկրտութեան խորհրդակատարութեան բնագիրը եւ կանոնական ուղեցոյցը: Մասնաւոր քննութեան առնուեց նաեւ ծիսական լեզուի խնդիրը: Ս. Մկրտութեան նախապատրաստութեան ուսուցման ձեռնարկի առընչութեամբ յանձնախումբը որոշեց շարունակել լրամշակման աշխատանքները՝ վերջնաժամկէտ սահմանելով մայիս ամիսը:

Ծիսական յանձնախմբի յաջորդ հանդիպումը տեղի կ՚ունենայ մայիսի 19-23-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Հովհաննիսյանը նշանակվել է Ս. Գայանե վանքի վանահայր, Հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Պողոսյանը՝ Մայր Աթոռի Սոցիալական ծառայության տնօրեն:

Հոգեշնորհ Տ. Անդրանիկ աբեղա Գեւորգյանը, ազատվելով Ս. Գայանե վանքի վանահոր պարտականություններից, կշարունակի ծառայել Մայր Աթոռի Կալվածոց տեսչության տնօրենի պաշտոնում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Տ. Կարապետ ավ. քհն. Գլլըճյան (Վանորեից փեսչություն)
Ռան Սինանյան (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Գառնիկ Հայրապետյան (Ազգային բանակ)
Դանիել Բալայան (Ազգային բանակ)
Օնիկ Գասպարյան (Ազգային բանակ)
Պողոս Պողոսյան (Ազգային բանակ)
Սամվել Կարապետյան (Ազգային բանակ)
Հայկ սրկ. Ազարյան (Ռումինիայի թեմ)
Կարո Գուրյան (ԱՄՆ Արեւմտյան թեմ)